<<Հաստատում եմ>>
Նաիրի համայնքի ղեկավար
_____ Ն. Մարգսյան
<<23>> հուլիս 2024թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
N <<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-24/13>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. **Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:**

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում **Նաիրիի համայնքապետարանում թեքահարթակների կառուցման աշխատանքների** ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. **Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները.** <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի **2024 թվականի հունիսի 20-ին** կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. **Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.** Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. **Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.**

<<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-24/13>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով **երեք** հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	ՀԱԶԱՐԱՇԵՆ ԱԿ	hazarashen@gmail.com հեռ. 0477-10-18-35	000244732
2	<<ԱՄՈՒՆ>> ՍՊԸ	amuninfo@yandex.ru հեռ. 096-00-83-83	000244577
3	<<ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ>> ՍՊԸ	nara-8787@mail.ru հեռ. 091-95-85-55	000244715

6. **Հայտով ներկայացված գները.**

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	<<ԱՄՈՒՆ>> ՍՊԸ	2 200 000	-	2 200 000
2	ՀԱԶԱՐԱՇԵՆ ԱԿ	3 622 000	-	3 622 000

7. **Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները.** Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **2024 թվականի հունիսի 27-ի թիվ 2** որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով <<ԱՄՈՒՆ>> ՍՊԸ –ն:

8. **Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը.** <<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-24/13>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց <<ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ի հայտը մերժել:

9. **Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.**

Չափաբաժին 1

2024 թվականի հուլիսի 19-ին Պատվիրատու՝ **Նաիրիի համայնքապետարանի**, որը գտնվում է **ք. Եղվարդ, Երևանյան 1** հասցեում, և Կապալառու՝ <<ԱՄՈՒՆ>> ՍՊԸ -ի, որը գտնվում է **գ. Առինջ, Գ թաղամաս 3-րդ փ., 8տ.** հասցեում, միջև կնքվել է **Նաիրիի համայնքապետարանում թեքահարթակների կառուցման աշխատանքների** ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-24/13>>: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

10. **Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը.** Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. **Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները.** Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Վ. Վիրաբյան

(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)